Բանկի գործադիր մարմնի աշխատանքի գնահատման սկզբունքները

Բանկի գործադիր մարմնի (Վարչության) աշխատանքների գնահատման հիմք են հանդիսանում Բանկի Գործադիր տնօրենի (Վարչության նախագահի), Գլխավոր հաշվապահի, Ներքին աուդիտի վարչության պետի կողմից Բանկի Խորհրդին ներկայացվող եռամսյակային հաշվետվությունները, ինչպես նաև Բանկի Խորհրդի կողմից հաստատված ցանկի համաձայն ստորաբաժանումների կողմից ամսական կամ եռամսյակային պարբերությամբ ներկայացվող հաշվետվությունները, ՀՀ կենտրոնական բանկի ստուգման ակտերը, արտաքին աուդիտի անցկացման արդյունքները: Վարչության աշխատանքները գնահատվում են նաև ելնելով Վարչության կողմից.

- Վարչության գործունեությունը սահմանող և կանոնակարգող Վարչության կանոնակարգի պահանջների պատշաճ կատարումից,
- կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրումից,
- Բանկի ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքներից,
- Խորհրդի կողմից ընդունված կարգերի, կանոնակարգերի և այլ որոշումների պատշաճ կատարումից,
- Բանկի ընթացիկ գործունեության արդյունավետ կառավարումից,
- ՀՀ բանկային համակարգում բանկի մրցունակությունը բարձր պահելու խնդրի իրագործումից,
- ռիսկերի կառավարման քաղաքականության իրագործումից,
- բյուջեի պլանավորումից և իրականացումից,
- վարվող կադրային քաղաքականությունից: